Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

176
S-80

29 JUL 2009

ՍԵՌԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

176
Տ-80



300
1658-5Ա

ԼԵՒ ՏԱԼՍՏՈՅ.

ԹԱՐԳՄ. ԷՄՄ. ՔԱՀ. ՆԱԶԱՐԵԱՆՑ.

Էլեքտրաշարժ տպարան Ե. Ալետիքեանի, Մոսկվա.
1906.

23 AUG 2013

12482

176 | Տալստոյ
Տ-80 | Սեռայի
Յարաբերութիւն

Ե 10/VIII
524 3/X 60
Ե 8691 21/XII 80

176
Տ-80
300 կր
1658-ՏԱ

12482

ԼԵՒ ՏԱԼՍՏՈՅ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴ
S.S.S.R. Публичная Библ...
7/XI 1922
ՄՈՍԿՎԱ, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ

ՍԵՌԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

Թարգմանեց

ԷՄՄ. ՔԱՀ. ՆԱՁԱՐԵԱՆՑ.

Էլեկտրաշարժ տպարան Ե. Սաւտիրեանի, Մոսկվա.
1906.

5158

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Բառերի վերջը, որտեղ «յ», իբրև անձայն կամ համր տառ, չէ հնչվում, բոլորովին աւելորդ է, չպէտք է գրվի:

Ցանկանալով, որ ուրիշներն էլ, ինձպէս, հրաժարվեն դրա գործածութիւնից, ես բերում եմ այստեղ երկու հատ արժէքաւոր պատճառաբանութիւն, աւելացնելով, որ, վերջին ժամանակներս, ռուսներն էլ, նոյն պատճառով, արդէն հրաժարվել ու հետզհետէ հրաժարվում են, մեր յ-ի պէս համր, իրանց «ъ»-ի գործածութիւնից:

Թարգմ.

*1) «Մեր նախնիք բառավերջում յ գրել են յաճախ բոլորովին անտեղի: Կան մի շարք բառեր, որոնք վերցրած են ասորերէնից: Ասորի լեզուում նրանք վերջանում են ա-ով, իսկ մերոնք գրել են այ. քահանա—**kahana**, լումայ—**luma**,... Տղայ գրէին թէ տղա, մի և նոյն է. սեռականում ա և ի իրար մօտ գալուց՝ տղա-ի ներս պիտի մտնէր յ շփման օրէնքով: Ճիշտ այնպէս, ինչպէս գրում ենք Ֆրանսիա, Ֆրանսիայի, տղա, տղայի... և այլն:*

*Հնում եղել են լուրջ փորձեր յապաւելու անձայն յ-երը: Լաղարեան Ճեմարանի Աւետարանում, որ մեզ հասած գրչագրներից ամենահինն է, գրած Թ. դարում, յ-ի զեղջը սովորական է —**սատանա, որդւ-ո, ձորձ-ո, ողորմեցա, հաճեցա, և այլն:***

Եթէ մի հնչիւն կա, որ չի սիրում աշխարհարարը, այդ յ է: Նոր յ-երով բեռնել լեզուն այն ժամանակ, երբ նա ձգնում է թօթափել հների ծանրութիւնը, նշանակում է բռնութիւն գործ դնել լեզուի վրա...

Յ-երի յապաւումը մեծ թեթևութիւն է, որովհետև լեզուն մօտեցնում է հնչականին:

Ն. Ադոնց.

2) «Մեր կարծիքով շատ նպատակայարմար կլինէր աշխարհարարի մէջ ընդունել այս ուղղագրութիւնը, գրելով «ծառա, քահանա, Վանա ծով» և այլն, ինչպէս որ գրում ենք «ահա, նա, նրա, Աննա, Եւրոպա, ասա, գնա» և այլն:

Այսպիսով կունենանք մի դիւրին և հաստատուն կանոն: Իսկ դիւրութիւնը, որ շփոթութիւններ չէ ծագեցնում, շատ և շատ գնահատելի բան է, մանաւանդ մեր հանդամանքներում եղող ժողովրդեան համար, որ օրից օր աւելի զրկւում է իւր մայրենի լեզուն սովորելու հնարաւորութիւնից և միջոցներից...»:

Գ. Տէր-Մկրտչեան:

ԼԵՒ ՏԱԼՍՏՕՅ

ՍԵՌԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ*)

I.

Ես ուզում էի ասել առաջին, որ մեր հասարակութեան միջև կազմված է հաստատ, բոլոր դասակարգերին յատուկ և կեղծ գիտութեան կողմից պաշտպանվող այն համոզումը, թէ սեռային յարաբերութիւնը՝ առողջութեանը անհրաժեշտ մի գործ է, և թէ՝ որովհետև կին առնելը այնպիսի բան չէ, որ միշտ հնարաւոր լինի, այս պատճառով, ամուսնութիւնից դուրս, սեռային յարաբերութիւնն էլ, — որ տղամարդի վրա, բացի զրամական վարձատրութիւնից,

*) Վ. Զերտկովը, Լև Տալստոյի գրուածքներից քաղուածքներ անելով սեռերի յարաբերութեան մասին, կազմել է մի գրքոյկ:

Իմ այս թարգմանութիւնը այդ գրքոյկի համառոտութիւնն է:

Թարգմ.

ուրիշ պարաք չէ՛ դնում, — բոլորովին բնական մի գործ է, ուստի և պէտք է խրախուսվի։ Այս համոզումը այնքան է հանրացել ու հաստատվել, որ ժնողները, բժշկների խորհրդով, իրանց զաւակների համար զեղխ ու անբարոյական կեանք են ստեղծում. կառավարութիւնները, — որոնց միակ նպատակը իրանց քաղաքացիների բարոյական վիճակի հոգատարութիւնն է, — հնարում են զեղխութիւններ, այսինքը կարդի են բերում կանանց ամբողջ մի դասակարգ, որոնց պարաքն է՝ հոգով ու մարմնով կորչել, ոչնչանալ՝ էրիկների (ազամարդկանց) երևակայական պահանջներին բաւարարութիւն տալու համար. իսկ ամուրիները, բոլորովին հանդիստ խղճով, անծնատուր են լինում զեղխութեանը։

Դրա առիթով ես ուզում էի ասել, որ սա լաւ չէ՛, որովհետև անկարելի է, որ մի քանի մարդու առողջութեան համար՝ հարկաւորվի ոչնչացնել միւսների հոգին ու մարմինը, ինչպէս անկարելի է, որ մի քանիսի առողջութեան համար՝ հարկաւորվի խմել միւսների արիւնը։

Իսկ այն եզրակացութիւնը, որ թվում է ինձ, թէ բնականաբար կարելի է անել սրանից, հետևեալն է. չպէ՛տք է ենթարկվել այս մոլորութեանն ու խաբէութեանը։ Իսկ չենթարկվելու համար, առաջին, չպէտք է հաւատալ անբարոյական վարդապետութիւնների, ի՛նչ երևակայական դիտութիւնների կողմից էլ նրանք

պաշտպանվելիս լինեն. ու երկրորդ, պէտք է հասկանալ, որ սեռային այնպիսի յարաբերութիւնը, որով մարդիկ կամ ազատում են իրանց նրանից սպասելիք հետևանքներից՝ զաւակներից, կամ այս հետևանքների ողջ ծանրութիւնը դնում կնոջ վրա, կամ զաւակներ ծնելու առաջն առնում, — այսպիսի սեռային յարաբերութիւնը մի յանցանք է բարոյականութեան ամենահաստատակ պահանջների դէմ, ստորութիւն է և, այս պատճառով, այն ամուրիները, որոնք չեն ուզում ստոր կեանքով ապրել, այսպէս չպէ՛տք է անեն։

Իսկ այդ զեղխութիւնից իրանց յետ պահելու, ժուժկալելու համար, բացի նրանից, որ պէտք է ապրեն բնական կեանքով, չպէտք է խմեն, շատ չուտեն, միս չուտեն և աշխատանքից (յոգնեցնող աշխատանքից) չփախչեն, — նրանք չպէ՛տք է մարքներովն անց կացնեն օտար կանանց հետ յարաբերութիւն ունենալը, ինչպէս մարդ չէ թույլ տալիս այդպիսի յարաբերութիւն ունենալ իր և իր մօր միջև, քոյրերի, աղջականների ու բարեկամների կանանց միջև։

Իսկ այն բանի ապացոյցները, թէ ժուժկալութիւնը անկարելի բան չէ և աւելի քիչ է վատնդաւոր ու առողջութեանը վնասակար, քան անժուժկալութիւնը, ամէն ազամարդ հարիւրաւորը կդտնի իր շուրջը։

Այս՝ առաջին։

Երկրորդն այն է, որ, մեր հասարակութեան

մէջ,—որտեղ սիրային յարաբերութեանը նայում են ոչ միայն իբրև առողջութեան անհրաժեշտ պայմանի և բաւականութեան, այլ և կեանքի բանաստեղծական վսեմ վայելքի,—ամուսնական անհաւասարմութիւնը, հասարակութեան բոլոր խաւերի միջև, (զիւղական խաւի մէջ, մանաւանդ դիւղերների շնորհիւ) դառել է ամենասովորական մի երևոյթ:

Ու ես կարծում եմ, որ սա լաւ չէ: Եւ սրանից այն եզրակացութիւնն է ստացվում, որ այդպէս չպէտք անել:

Իսկ այսպէս չանելու համար, պէտք է փոխվի սեռային յարաբերութեան մասին ունեցած կարծիքը. տղամարդիկ ու կանայք, ընտանիքներով և հասարակական կարծիքով պէտք է այնպէս կրթվեն, որ ամուսնանալուց թէ առաջ ու թէ յետո սիրահարութեան ու նրա հետ կապված սեռային սէրին չնայեն, իբրև բանաստեղծական ու վսեմ վիճակի, ինչպէս նայում են հիմա, այլ իբրև մարդու աչքում ստորացնող մի անասնական վիճակի, և, որ պսակվելու ժամանակ, հաւասարիմ մնալու խոստումը դրժելը նոյնպէս պատժվի հասարակական կարծիքի կողմից, ինչպէս պատժվում են դրամական պարտաւորութիւններ չկատարելն ու առևտրական խաբէութիւնները, — և ոչ թէ գովաբանվեն, ինչպէս անում են հիմա վէպերում, ռոմանաւորներում, երգերում, օպերաներում և այլն:

Այս՝ երկրորդ:

Երրորդն այն է, որ մեր հասարակութեան մէջ, —նոյնպէս և նոյն կեղծ նշանակութեան համար, որ տրված է սեռային սէրին, — որդեծնութիւնը կորցրել է իր իմաստը, և, փոխանակ ամուսնական յարաբերութիւնների նպատակն ու արդարացումը լինելու, դառել է սիրային յարաբերութիւնների ախորժ շարունակութեան խոչնդոտը, և, որ, այս պատճառով, ամուսնութիւնից դուրս էլ, ամուսնութեան մէջ էլ, բժշկական դիտութեան սպասաւորների խորհրդով, սկսել է տարածվել այնպիսի միջոցների գործադրութիւնը, որոնք կնոջը զրկում են զաւակներ ծնելու հնարաւորութիւնից, կամ սովորութիւն է դառել, ինչ որ առաջ չկար, ու դեռ հիմա էլ չկա զիւղական նահապետական ընտանիքներում, այն է՝ յղութեան և ծիծ տալու ժամանակ ամուսնական յարաբերութիւնները շարունակելը:

Ու ես կարծում եմ, որ սա լաւ բան չէ:

Որդեծնութեան դէմ հնարներ գործ դնելը լաւ չէ, առաջին, այն պատճառով, որ դա մարդուն զատում է զաւակների մասին հոգալուց ու աշխատելուց, զաւակների՝, որոնք հանդիսանում են իբրև սեռային սիրու փրկանք, ու երկրորդ, որովհետև սա մարդկային խղճի ամենահակառակ գործի, այն է՝ մարդասպանութեան ինչ որ շատ մօտիկ մի բան է: Եւ յղութեան ու ծիծ տալու միջոցին անժուժկալու-

թիւնը վատ է այն պատճառով, որ դա ոչնչացնում է կնոջ մարմնաւոր, և գլխաւորապէս հոգեկան ուժերը: Ու սրանից ստացվում է այն եզրակացութիւնը, որ այսպէս չպէտք է անել: Իսկ այսպէս չանելու համար՝ պէտք է հասկանալ, որ ժուժկալութիւնը,—որ մարդկային արժանապատուութեան անհրաժեշտ պայմանն է,—չամուսնացած, մանաւանդ թէ ամուսնացած ժամանակ, պարտաւորական է:

Այս՝ երրորդ:

Չորրորդն այն է, որ մեր հասարակութեան մէջ,—որտեղ դաւակները ներկայանում են կամ իբրև քէֆի արդիւք, կամ իբրև մի թշուառ պատահականութիւն, կամ իր տեսակի զուարճութիւն, երբ նրանց թիւը հասնում է այնքանի, ինչքան որ ծնողներն առաջուց որոշել են,—այդ դաւակները կրթվում են, նկատի ունենալով ոչ թէ մարդկային կեանքի այն խնդիրները, որ լուծելու են նրանք իբրև խելացի ու սիրված էակներ, այլ միայն նկատի ունենալով այն բաւականութիւնները, որ նրանք կարող են պատճառել իրանց ծնողներին: Եւ որ, այս պատճառով, մեր դաւակները կրթվում են, ինչպէս անասունների ծադեր, այնպէս որ ծնողների գլխաւոր անելիքը ոչ թէ այն է, որ նրանց պատրաստեն՝ մարդավայել գործ կատարելու, այլ այն (ինչի մէջ որ ծնողները պաշտպանվում են բժշկականութիւն կոչված կեղծ գիտութեան կողմից), որ, ինչքան կարելի է, լաւ ուտեցնեն

նրանց, մեծացնեն հասակները, որ նրանք լինեն մարբուր, սպիտակ, կուշտ, դեղեցիկ (եթէ հասարակ դասակարգերում այսպէս չեն անում, պատճառը անճարութիւնն է, իսկ հայեացքը մի և նոյնն է): Եւ քնքշացրած դաւակների մէջ, ինչպէս և լաւ կերակրած բոլոր անասունների, անբնականօրէն վաղ է առաջ գալիս այն անյաղթելի զգայականութիւնը, որ այդ դաւակների սոսկալի տանջանքների պատճառն է դառնում պատանիութեան տարիքում: Զարդարանքնե՛ը, կարդումնե՛ը, տեսարաննե՛ը, երաժշտութի՛ւնը, պարե՛ը, քաղցր կերակո՛ւրը, շրջապատը, բոլոր սարք ու կարգը՝ տուփիկների վրայի փոքրիկ պատկերներից սկսած՝ մինչև վէպե՛ը, վէպիկնե՛ն ու պոէմնե՛ը աւելի են բորբոքում այդ զգայականութիւնը, հետևապէս և սեռային ամենասոսկալի արատներն ու հիւանդութիւնները՝ երկու սեռի դաւակները մեծացնելու սովորական պայմաններն են դառնում, ու յաճախ մնում են նոյն իսկ մեծ հասակում:

Ու ինչ թվում է, որ սա լաւ բան չէ: Իսկ սրանից այն է եզրակացվում, որ պէտք է դադարել՝ մեր որդիքը՝ անասունների ծադերի պէս կրթելուց. նրանց կրթելու համար ուրի՛շ նպատակներ պէտք է սահմանել. միայն ի՛նչ ուզում է, լինի, չլինի,—մարմնի գեղեցիկ, լաւ պահած ու փայփայած լինելը չպէ՛տք է լինի:

Այս՝ չորրորդ:

Հինգերորդն այն է, որ մեր հասարակութեան

մէջ, որտեղ երիտասարդ տղամարդի ու կնոջ սիրահարութիւնը, — որի հիմքը էլի սեռային սէրն է, — մարդիկ հասցրել են մարդկային ձգտումների բանաստեղծական բարձրագոյն նպատակին, որի ապացոյցն է մեր հասարակութեան ողջ արուեստն ու բանաստեղծութիւնը, — երիտասարդները իրանց կեանքի լաւագոյն ժամանակը նուիրում են. տղամարդիկ՝ լաւ երեւալուն, հեռատեսութեան ու իրրև սիրային կապ կամ ամուսնութիւն, սիրու ամենալաւ առարկաներին տիրելուն. իսկ կանայք ու օրիորդները՝ տղամարդիկ հրապուրելուն և իրանց հետ կապելուն կամ ամուսնանալուն:

Ու այս պատճառով մարդու լաւագոյն ուժերը զործ են դրվում ոչ միայն ոչինչ չարտաբերող, այլ և վնասակար աշխատանքի վրա: Սրանից է առաջ գալիս մեր կեանքի անմիտ շքեղութեան մեծ մասը, սրանից է առաջ գալիս տղամարդկանց անզործութիւնն ու կանանց անամօթութիւնը, որոնք առանց քաշվելու, հաղնվում են մարմնի մասների ղղայականութիւնը դրդող մոդերով, որ առել են առաջուց յայտնի՝ փչացած կանանցից:

Ու ես կարծում եմ, որ սա լաւ բան չէ:

Լաւ բան չէ այն պատճառով, որ, ամուսնութեամբ կամ ամուսնութիւնից դուրս, սիրու առարկային միանալու նպատակին հասնելը, — ինչքան էլ դա բանաստեղծիկ լինի, — նոյնպէս անմարդավայել մի

նպատակ է, ինչպէս և քաղցը ու առատ կերակուր ծեռք բերելու նպատակը, որ շատերին ամենաբարձր վայելք է թվում:

Իսկ սրանից ստացվող եզրակացութիւնն այն է, որ պէտք է ծեռք վերցնել այնպէս մտածելուց, իբր թէ մարմնական սէրը ինչ որ առանձին մի վսեմ բան է. այլ պէտք է հասկանալ, որ մարդավայել նպատակը, — մարդկութեանը, հայրենիքին, գիտութեանը, թէ արուեստին (էլ չեմ ասում Աստծուն) ծառայելը, ինչ ուզում է, լինի, եթէ միայն մենք մարդավայել ենք համարում, — ամուսնութեամբ կամ ամուսնութիւնից դուրս սիրու առարկային տիրելով չէ ծեռք բերվում, այլ, դրա հակառակ, սիրահարութիւնը և սիրու առարկային տիրելը (ինչքան էլ աշխատեն հակառակն ապացուցել ոտանաւոր ու արձակ գրուածքներում) երբէք չէ թեթեւացնում մարդավայել նպատակին հասնելու զործը, այլ միշտ դժուարացնում է:

Այս՝ հինգերորդ:

Ահա այն դլխաւորը, որ ես ուզում էի ասել ու կարծում էի, թէ ասել եմ իմ պատմուածքում *): Ու ինձ թվում էր, թէ կարելի է խօսել, դատել այն բանի մասին, թէ ինչպէս ուղղենք այս գրութիւնների մատնանշած չարիքը, բայց և թվում էր, որ նրանց երբէք չի կարելի համաձայնել: Ինձ այն պատճառով

*) «Կրէյցերեան Սոնատա»: Թարգմ.

էր անկարելի թվում այդ դրութիւններին համաձայնելը, որ՝ առաջին, դրանք բոլորովին համաձայն են մարդկութեան առաջդիմութեանը, — որ սանձարձակութիւնից հեռացեալ ողջախոհութեանն է դիմում, — և հասարակութեան բարոյական դիտակցութեանը, մեր խղճին, որ միշտ դատապարտում է սանձարձակութիւնն ու գնահատում ողջախոհութիւնը. և, երկրորդ, որ այդ դրութիւնները միայն աւետարանական վարդապետութիւնից առնված անխուսափելի եզրակացութիւններն են, կամ, գոնէ, — թէպէտև անդիտակցաբար, — ընդունում ենք իբրև մեր հասկացողութիւնների ու բարոյականութեան հիմք:

Բայց այնպէս դուրս չեկաւ:

Ուղիղ է, ոչ ոք ուղղակի չէ վիճում՝ որ չէ՛ հարկաւոր դեղն կեանք անց կացնել ամուսնանալուց առաջ, ոչ էլ յետո, որ չպէ՛տք է արուեստական կերպով ոչնչացնել որդեծնութիւնը, որ չպէ՛տք է երեխաները զուարճութեան առարկա շինել, և սիրային միացումը ուրիշ ամէն բանից վեր դասել, — մի՛ խօսքով՝ ոչ ոք չէ՛ վիճում, որ ողջախոհութիւնը սանձարձակութիւնից լաւ է: Բայց ասում են. «Եթէ չամուսնանալը ամուսնանալուց լաւ է, պարզ է, որ մարդ լաւը պէտք է թողնի ու աւելի՛ լաւն անի: Իսկ եթէ մարդիկ այսպէս անեն, այն ժամանակ մարդկային ազգը կվերջանա, այս պատճառով էլ մարդկային ազգի իդէալ չի՛ կարող լինել նրա ոչնչացումը»: Սակայն,

մի կողմ թողնելով, որ մարդկային ազգի ոչնչացումը մեր ժամանակի մարդկութեան համար մի նոր միտք չէ, — այլ կրօնասէրների համար հաւատի դատաստանութիւն է, իսկ դիտութեան մարդկանց համար՝ արևի սառչելու վերաբերմամբ արած դիտումների անխուսափելի եզրակացութիւնը, — այս առարկութեան մէջ մեծ, ապրածված ու հին մի թիւրիմացութիւն կա: Ասում են՝ «Եթէ մարդիկ հասնեն կատարեալ ողջախոհութեան իդէալին, կոչնչանան. այս պատճառով էլ այդ իդէալը ճիշտ իդէալ չէ»: Բայց այսպէս ասողները, դիտաւորութեամբ թէ առանց դիտաւորութեան, շփոթում են երկու զանազան բաներ՝ կանոն — հրամանն ու իդէալը:

Ողջախոհութիւնը կանոն կամ հրաման չէ, այլ՝ իդէալ, աւելի ճիշտ՝ նրա պայմաններից մէկը: Իդէալը միայն այն ժամանակն է իդէալ, երբ այն կարելի է իրականացնել միայն դաղափարի՛, մտքի՛ մէջ, երբ նա մատչելի է դառնում միայն անվերջ լինելով և երբ, այս պատճառով, նրան մօտենալու հնարաւորութիւնը անսահման է: Եթէ իդէալին ոչ միայն կարելի լիներ հասնել, այլ և կարողանայինք նրա իրականացումը երևակայել, էլ նա իդէալ չէր լինի:

II.

Եկեղեցական վարդապետութիւնները,—որոնք իրանց քրիստոնէական են անուանում, – կեանքի բոլոր արտայայտութիւնների վերաբերմամբ, Քրիստոսի իդէալի վարդապետութեան փոխանակ, սահմանել են արտաքին այնպիսի որոշումներ ու կանոններ, որոնք հակառակ են վարդապետութեան ոգուն: Այսպէս են արել՝ իշխանութեան, դատարանի, զօրքի, եկեղեցու, աստուածպաշտութեան վերաբերմամբ, այսպէս են արել և ամուսնութեան վերաբերմամբ: Զնայելով, որ Քրիստոս ոչ միայն երբէք ամուսնութիւն չէ՛ սահմանել,—բայց եթէ բանը հասնի արտաքին որոշումների, այն ժամանակ իսկապէս նա մերժե՛լ է ամուսնութիւնը («Թող կինդ և արի՛ իմ ետևից»),—իրանց քրիստոնէական անուանող եկեղեցական վարդապետութիւնները՝ են սահմանել ամուսնութիւնը, իբրև քրիստոնէական հիմնարկութիւն, այսինքը որոշել են այնպիսի արտաքին պայմաններ, որոնց մէջ մարմնական սէրը քրիստոնէի համար կարող է իբր թէ անմեղ ու բարոյական օրինական լինել: Հէնց սրանի՛ց է առաջ գալիս սկզբից օտարոտի թվացող այն երևոյթը, որ հրէաների, մահմէտականների, լամայականների և այլն մէջ, որոնք ընդունում են քրիստոնէականից ցած կրօնական վարդապետութիւններ, բայց ունեն ամուսնութեան

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Խ.Հ. С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
Ереванъ, Минскую
1003
19482

համար արտաքին, նիշտ որոշումներ,— բնականեկան սկզբունքն ու ամուսնական հաղորդութիւնը անհամեմատ աւելի են հաստատ, քան, այսպէս կոչված, քրիստոնեաների:

Դրանք ունեն որոշ հարճութիւն ու բազմակնութիւն և բազմերիկութիւն, որոնք ամփոփված են որոշ սահմաններում: Իսկ մեղնում իշխում է կատարեալ սանձարձակութիւն, այլ և՝ հարճութիւն, բազմակնութիւն ու բազմերիկութիւն, որ չէ՛ ենթարկվում ոչ մի կանոնի, և թաղնված է երևակայական միակնութեան անուան տակ:

Միայն այն պատճառով, որ միացողների մի փոքրիկ մասի վրա կրօնականութիւնը, այն էլ՝ փողով, կատարում է եկեղեցական ամուսնութիւն կոչվող որոշ արարողութիւնը, մեր ժամանակի մարդիկ միամտաբար կամ կեղծաւորաբար երևակայում են, թէ ապրում են միակնութեան վիճակում:

Քրիստոնէական ամուսնութիւն երբէք ոչ եղել է, ոչ էլ կլինի, ինչպէս երբէք չե՛ն եղել ու չեն կարող լինել ոչ քրիստոնէական աստուածպաշտութիւն (Մատթ. Զ, 5—12. Յովհ. Դ. 21), ոչ քրիստոնեա ուսուցիչներ ու հայրեր (Մատթ. ԻԳ., 8 – 10), ոչ քրիստոնէական սեփականութիւն, ոչ քրիստոնէական զօրք, ոչ դատարան, ոչ պետութիւն:

Կարելի է չընդունել Քրիստոսի վարդապետութիւնը, այն վարդապետութիւնը, որով ստեղծված է

մեր ողջ կեանքը, և որի վրա հիմնված է մեր ողջ բարոյականութիւնը, բայց,—ընդունելով այդ վարդապետութիւնը, չի՛ կարելի չընդունել այն, որ նա մատնանշում է կատարեալ ողջախոհութեան իդէալը:

Աւետարանում ասար, պարզ ու աշկարա ասված է, առաջին՝ որ կին ունեցողը նրանից չպէ՛տք է բաժանվի՝ ուրիշ կին առնելու համար, այլ պէտք է ապրի նրա հետ, ում հետ արդէն կապվել է (Մատթ. Ե. 31, 32, ԺԹ. 8). երկրորդ՝ որ մարդ առ հասարակ, հետևապէս թէ՛ ամուսնացածը ու թէ չամուսնացածը չպէ՛տք է նայի կնոջը, իբրև զուարճութեան առարկայի (Մատթ. Ե. 28 — 29) և, երրորդ՝ որ չամուսնացածը լաւ կանի, եթէ բոլորովին չամուսնանա, այսինքը լինի բոլորովին ողջախոհ (Մատթ. ԺԹ., 10—12):

Քրիստոնէական վարդապետութիւնը կեանքի ձևերը չէ՛ որոշում, այլ մարդու բոլոր յարաբերութիւնների մէջ միայն իդէալը, ուղղութիւնն է մատնանշում. մի և նոյնն էլ անում է սեռային հարցում: Իսկ քրիստոնէական ոգի չունեցող մարդիկ ձևերի որոշումն են ուզում: Հէնց նրանց համար էլ հնարված է եկեղեցական ամուսնութիւնը, որի մէջ քրիստոնէական ասված բանից ոչինչ չկա:

Մի՛ բան կարելի է ասել նրանց, որոնք «ուրեմն, ի՞նչ անենք. ամուսնանանք, թէ չամուսնանանք» հարցի պատասխանն են ուզում,—այն, որ եթէ դուք չէք

տեսնում ողջախոհութեան իդէալը, պահանջ չէք զգում նրան անձնատուր լինելու, դիմեցէք ողջախոհութեանը ամուսնական ողջախոհութեամբ, ինքներդ այդ չհասկանալով: Ի՞նչպէս, ինքս բարձրահասակ լինելով ու առջևս զանգակատուն տեսնելով, ես չեմ կարող այդ զանգակատունը, իբրև նամփի ուղղութիւն, ցոյց տալ մօտովս անցնող մի կարճահասակ մարդու, որ այն չէ՛ տեսնում,—այլ պէտք է ցոյց տամ նրան՝ մի և նոյն նամփին անկված մի ծող (вѣха). ահա այսպիսի մի ծող է շիտակ ամուսնութիւնը նրանց համար, ովքեր չէ՛ն տեսնում ողջախոհութեան իդէալը: Բայց այսպէս կարող ենք ցոյց տալ՝ ես, դուք. իսկ Քրիստոս ոչինչ չէ՛ ցոյց տվել ու չի կարող ցոյց տալ, իբրև ողջախոհութիւն:

Սեռային ցանկութեան, տափանքի դէմ մղվող կռիւը ամենադժուար կռիւն է, և, բացի մանկութեան առաջին շրջանից և խոր ծերութիւնից,—չկա այնպիսի վիճակ ու տարիք, որ մարդ ազատ լինի այդ կռիւից, այս պատճառով էլ, չի՛ հարկաւոր ընկնվել այս կռիւը, յոյս ունենալ, թէ կարելի է ձեռք բերվի այնպիսի վիճակ, երբ դա չլինի, ու ոչ մի բոպէ չպէտք է թուլանալ, այլ պէտք է յիշել ու գործ դնել այն բոլոր միջոցները, որոնք ակարացնում են թշնամուն, այն է՝ խուսափել մարմինն ու հոգին գրգռող ամէն բանից, աշխատել զբաղված լինել: Այս՝ մէկ: Միւսն էլ այս է. եթէ տեսնում ես, որ չես կարող

կուրումը յաղթող դուրս գալ,—ամուսնացի՛ր, այսինքը ընտրի՛ր այնպիսի կին, որ համաձայնի ամուսնանալ, և քեզ ու քեզ սամ, եթէ չկարողանաս չընկնել կրուրումը, այն ժամանակ ընկի՛ր միայն այս կնոջ հետ, ու նրա հետ կրթիր երեխաներդ, եթէ ունենաս, և նրա հետ միասին, նրան թև ու թիկունք դառնալով, արի՛ դէպ ողջախոհութիւն,—ի՛նչքան շուտ, այնքան լաւ: Ուրիշ միջոցներ ես չդիտեմ:

Մարդ ո՛չ թէ ողջախոհութեան, այլ ողջախոհութեանը մօտենալու խնդի՛րը պէտք է դնի իր առջևը: Կենդան մարդը, — խօսելով խիստ լեզուով, — չի՛ կարող ողջախոհ լինել: Կենդան մարդը կարող է միայն ձգտե՛լ ողջախոհութեանը, իսկապէս այն պատճառով, որ նա ո՛չ թէ ողջախոհ է, այլ՝ ցանկասէր ու տուփոտ: Եթէ մարդը տուփոտ չլինէր, չէր դիտենա, ի՛նչ բան է ողջախոհութիւնը, հասկացողութիւն իսկ չէր ունենա նրա մասին:

Ես շատ եմ մտածել սիրահարութեան մասին և չեմ կարողացել դտնել նրա տեղն ու նշանակութիւնը: Այն ինչ՝ նրա տեղն ու նշանակութիւնը շատ պարզ են եղել ու որոշ. դրա նպատակն է — թեթևացնել ողջախոհութեան դէմ մղվող՝ ցանկութեան կռիւը: Սիրահարվել կարող են այն պատանիները, որոնք չեն կարողանում դիմանալ կատարեալ ողջախոհութեանը. սիրահարութիւնը կարող է լինել՝ ամուսնանալուց առաջ և պատանիներին ազատել տանջող կռիւից, —

ամենակրիտիկական տարիներում, 16-ից մինչև 18 տարին ու տեղի: Սա այստեղ կարող է տեղ ունենալ սիրահարութիւնը: Իսկ երբ նա բուն է դնում մարդու մէջ, ամուսնութիւնի՛ց յետո, անտեղի է ու դզվելի:

Մարդիկ վիճում են այն բանի մասին, արդեօք լա՞ւ բան է սիրահարութիւնը: Ես դրա համար ունեմ մի՛ պարզ վճիռ:

Եթէ մարդ ապրում է մարդկային, հոգևոր կեանքով, այն ժամանակ սիրահարութիւնը, սէրը, ամուսնութիւնը նրա համար կլինի անկում. նա պէտք է պարտաւորված լինի՝ տալու իր ուժերի մի մասը կնոջը, ընտանիքին կամ թէկուզ միմիայն սիրահարութեան առարկային: Իսկ եթէ նա կանգնած է անասնական աստիճանի վրա, ուտում է, աշխատում, ծառայում, դրում, նուաղում, այն ժամանակ սիրահարութիւնը նրա,—ինչպէս և անասունների ու միջատների համար՝ կլինի բարձրացում:

Մի՛ք հաւատա, սակայն, իբր թէ կանանց մօտենալու մէջ ինչ որ առանձին լաւ ու մեղմացնող մի բան կա: Այդ բոլորը ցանկութեան պատրանքն է: Կնոջը, ինչպէս և ամէն մարդու, մօտենալու մէջ՝ ուրախալի շատ բան կա, բայց առանձնապէս կնոջը մօտենալու մէջ՝ ոչի՛նչ չկա. եղածն էլ զզայականութեան խորը ծածկված պատրանքն է, այսու ամենայնիւ, զզայականութեան:

Դուք ինձ հարցնում էք ամորձատների (սկապեցների), ներքինիների մասին, թէ ուղիղ է, որ դրանք վատ մարդիկ են, և ուղիղ են հասկանում դրանք Մատթ. աւետարանի ԺԹ. գլուխը, ներքինիացնելով իրանց և ուրիշներին այդ գլխի 12-դ տան հիման վրա։

Առաջին հարցի վերաբերմամբ իմ պատասխանն այն է, որ վատ մարդիկ չկան, և բոլոր մարդիկ մէկ հօր զաւակներն են, միմեանց եղբայրներ ու ամէնքը հաւասար, — մէկը միւսից ոչ լաւ, ոչ վատ։ Իսկ լաւ ծիս նայելով, այդ ներքինիներն ապրում են բարոյական ու աշխատասէր կեանքով։ Գալով երկրորդ հարցին, թէ ճիշտ են հասկանում նրանք աւետարանը, նրա հիման վրա ներքինիացնելով իրանց և ուրիշներին,— կատարեալ համոզումով պատասխանում եմ, որ նրանք աւետարանը ճիշտ չէն հասկանում, և, ներքինիացնելով իրանց ու մանաւանդ ուրիշներին, ճշմարիտ քրիստոնէութեանն ուղղակի հակառակ են վարվում։ Քրիստոս քարոզում է ողջախոհութիւն, բայց ողջախոհութիւնը, ինչպէս և ամէն առաքինութիւն, արժէք ունի այն ժամանակ, երբ ծեռք է բերվում կամքի վրա դործ դրած ջանքով, որ պաշտպանվում է հաւատի կողմից, և ոչ թէ այն ժամանակ, երբ մեդանչելը անկարելի է դառնում։ Մի և նոյնը կլինի, եթէ մարդ, շատ չուտելու համար, լոյս դցի իր մէջ ստամոքսի հիւանդութիւն, չկուտելու համար, կապի

իր ծեռքերը կամ, չհայհոյելու համար՝ կտրի իր լեզուն։ Քրիստոս ասում է՝ «Իմ լուծը քաղցր է ու բեռս՝ թեթև», և արդելում է մարդու վրա դործ դնելիք ամէն բռնութիւն ու լկանք. այս պատճառով էլ, վերքեր տալն ու տանջանքներ պատճառելը, — թէկուզ մինչ անդամ ոչ թէ ուրիշներին (որ արդէն աշկարա մեղք է), այլ՝ հէնց իրան — քրիստոնէական օրէնքը խախտել է նշանակում։

Քրիստոս ոչ թէ ամուսնութիւնն է արդելում, այլ՝ ամուսնալուծութիւնը, այսինքը կին փոխելը։ Քրիստոս ամուսնութեան մէջ էլ ամենամեծ ողջախոհութիւն է պահանջում — այն, որ մարդիկ միակի՛ն լինեն։ Իսկ երբ աշակերտները (10-դ տուն) նրան ասեցին, որ այդպէս ժուժկալելը շատ դժուար է, այսինքը մէկ կնոջով բաւականանալը *), նա նրանց ասում է, որ, թէպէտ ամե՛նքը չէն կարող այդպէս ժուժկալել, ինչպէս ժուժկալում են նրանք, ովքեր ներքինի են ծնվել, կամ որոնց—ներքինիների պէս— մարդիկ են ներքինիացրել, բայց կան այնպիսիները, որոնք իրանք են իրանց ներքինիացրել երկնքի արքայութեան համար, այսինքը հոդով յաղթել են իրանց ցանկութեանը, և որ պէտք է աշխատել հէնց այդպիսի ներքինի դառնալ։ Ասելով «Այնպիսիները, որոնք իրանք են իրանց ներքի-

*) Այսինքը՝ մէկ անդամ ամուսնանալը։ Թարդմ.

նիացրել երկնքի արքայութեան համար», պէտք է հասկանալ մարմնի դէմ տարած հոգու յաղթութիւնը, և ոչ թէ մարմնական ներքինիացումը. այդ երևում է նրանից, որ ուրեղ խօսք է ընկնում մարմնական ներքինիացման մասին, ասվում է՝ մարդկանցից են ներքինիացել, իսկ որտեղ խօսք է ընկնում մարմնի դէմ տարած հոգու յաղթանակի մասին, ասվում է՝ իրանք են իրանց ներքինիացրել:

Ամուսնական կեանքում որդեծնութիւնը անտարկութիւն չէ. բայց կուզէի խորը մտածել այս բանի մասին, որ կարելի լինի հիմնաւոր կարծիք յայտնել, որովհետև հէնց այն կարծիքի մէջ,—թէ մարմնական յարաբերութիւնը, թէպէտև սեփական կնոջ հետ, միմիայն ցանկութեան պատճառով, մեղք է,—ճշմարտութիւն կա: Այսպէս էլ,—ինչպէս ես եմ կարծում,—իրան ներքինիացնելը նոյնպիսի մեղք է, ինչպիսին է մարմնական յարաբերութիւնը, որ տեղ է ունենում ցանկութիւնը կատարելու համար: Իմ կարծիքով՝ հաւասարապէս մեղք է՝ թէ շատ ուտելը, թէ իրան քաղցած պահելը կամ թունաւորելը: Մարմնի վերաբերմամբ այն կերակուրն է օրինական, որը ուտելով, մարդ կարող է ծառայել ուրիշներին, և օրինական է մարմնական այն մերձաւորութիւնը, որով շարունակվում է մարդկային ազգը:

Ուրախ ապրելու համար ամուսնանալը երբէք

բախտաւոր ամուսնութիւն չի լինի: Մեծ սխալ է, երբ մարդ՝ զլխաւոր ու ամէն բան փոխարինող նպատակ է համարում ամուսնանալը, սիրածի հետ միանալը: Ու այդ շատ պարզ է, եթէ մարդ լաւ մտածի: Ամուսնութիւնը շինել նպատակ: Լաւ. ամուսնացաք, յետո: Եթէ ամուսնանալուց առաջ, կեանքներդ ուրիշ նպատակ չէ՞ ունեցել, յետո, երկուսով, շատ դժուար, համարեա անկարելի է, որ կարողանաք նպատակ դանել: Մինչ անգամ հաստատ կարելի է ասել, որ, եթէ ամուսնանալուց առաջ, մի հանուր նպատակ չէք ունեցել, յետո ոչ մի կերպով չէք կարող իրար դալ, այլ միշտ կհեռանաք միմեանցից: Ամուսնութիւնը միայն այն ժամանակն է բախտաւորացնում, երբ նպատակները մէկ է. մարդիկ հանդիպում են ճամփին ու ասում, «Ե՛կէք, միասին դնանք»: «Ե՛կէք», ու ծեռք-ծեռքի են տալիս. բայց ոչ թէ այն ժամանակը, երբ,—իրար քաշքշելուց յետո,—մէկը մի՛ կողմն է դնում, միւսը՝ միւս կողմը:

Ովքեր պատրաստվում են ամուսնանալ,—հէնց այն պատճառով, որ կեանքը նրանց կատարեալ է թվում,—ուրիշ ժամանակներից աւելի՛ պէտք է մտածեն ու պարզեն, թէ ինչի՛ համար է ապրում իրանցից իւրաքանչիւրը:

Իսկ այս բանը պարզելու համար, պէտք է դանէք այն պայմանները, որոնց մէջ ապրում էք, զնահատէք ձեր անցեալը, այն ամէնը, ինչ որ կարևոր էք համա-

ռում ու կարևոր չէք համարում, ինչի՛ն հաւատում էք, այսինքը ի՛նչն էք համարում ձեր մշտական, անփոփոխ ճշմարտութիւնը և ինչով էք առաջնորդվելու կեանքում։ Եւ ոչ միայն պէտք է իմանաք ու պարզէք, այլ և գործով փորձէք, իրագործէք կեանքում, որովհետև քանի դեռ չէք անում այն, ինչի՛ որ հաւատում էք, ինքներդ էլ չգիտէք, հաւատո՞ւմ էք, թէ ոչ։ Հաւատն այն է, որ մարդ իր բարօրութիւնը փնտռի ուրիշներին սիրելու և նրանցից սիրվելու մէջ։ Իսկ այս բանին հասնելու համար՝ ինձ յայտնի են երեք բան, որոնց մէջ ես շարունակ վարժվում եմ, որոնց մէջ մարդ ի՛նչքան էլ վարժվի, էլի քիչ է, և որոնք ձեզ աւելի հիմա են հարկաւոր,

Առաջինը՝ որ մարդ կարողանա սիրել ուրիշներին ու սիրվել նրանցից, պէտք է իրան սովորեցնի, ի՛նչքան կարելի է, քի՛չ պահանջել նրանցից, որովհետև, եթէ ես շատ բան եմ պահանջում, շատ բաներից եմ զրկվում, իսկ երբ զրկանքներս շատ են լինում, ես հակվում եմ չսիրելու, այլ յանդիմանելու, — այստեղ շատ բան կա անելու։

Երկրորդը՝ ուրիշներին ոչ թէ խօսքով, այլ գործով սիրելու համար՝ մարդ պէտք է իրան սովորեցնի անել այն, ինչ որ օգտակար է ուրիշներին։ Սրա վրա մարդ շատ աշխատանք պէտք է թափի, մանաւանդ ձե՛ր տարիքներում, երբ մարդուն յատուկ է սովորելը։

Երրորդը՝ ուրիշներին սիրելու և նրանցից սիրվելու համար՝ պէտք է սովորել հեզութեան, խոնարհութեան և անդուրեկան մարդկանց ու անախորժութիւններ տանելու արուեստը. դրանց հետ միշտ այնպէս պէտք է վարվել, որ ոչ որ չվիրաւորվի, իսկ երբ անկարելի է ոչ ոքի չվիրաւորելը, մարդ պէտք է կարողանա ընտրել վիրաւորանքներից ամենաթեթևը։ Ու այս կողմից աւելի՛ շատ աշխատանք է պահանջվում. շարունակ պէտք է աշխատել՝ զարթելուց սկսած մինչև քնելը։ Ու սա ամենաուրախ աշխատանքն է, որովհետև մարդ օրէցօր է ուրախանում, տեսնելով իր ունեցած աջողութիւնները և, բացի դրանից, ուրիշներին սիրելու համար՝ ստանում է այնպիսի մի պարգև, որ, թէպէտ սկզբում աննկատելի է լինում, բայց յետո դառնում է շատ ուրախարար։

Ձեր կեանքի նպատակը ոչ թէ ամուսնութեան ուրախութիւնը պէտք է լինի, այլ այն, որ ձեր գոյութեամբ կարողանաք աւելի մեծ սէր ու շատ ճշմարտութիւն մտցնել աշխարհ։ Իսկ ամուսնութիւնը միայն այն բանի համար է, որ օգնէք միմեանց՝ այս նպատակին հասնելու։ Les extrèmes se touchent. Ամենաեսական ու փուչ կեանքը այն երկու մարդու կեանքն է, որոնք միացել են՝ քէֆի համար, «իրանց արևի ծէնն ածելու» համար։

Պէտք է ամուսնանալ՝ ոչ թէ սիրելուց, այլ անպատեհառ հաշուով, միայն այս խօսքերը հասկանալով՝

սովորական հասկացվածին բոլորովին հակառակ մրաբով, այսինքը ամուսնանալ ոչ թէ զգայական սիրուց, այլ՝ հաշուով, այն էլ՝ ոչ թէ օրաեղ ու ինչով ապրելու (ամենքն ապրում են), այլ այն հաշուով, թէ ինչքան է հաւանական, որ ապագա կինս ոչ թէ խանգարելու, այլ օգնելու է ինձ՝ մարդկային կեանքով ապրելու: Միշտ այնպէս պէտք է ամուսնանանք, ինչպէս մեռնում ենք. այսինքը միայն այն ժամանակ, երբ այլապէս անկարելի է: Ինչպէս մահն այն ժամանակն է լաւ, երբ անխուսափելի է, — իսկ դիտաւորեալ մահը՝ վատ է, — այնպէս էլ ամուսնութիւնն է:

Ամուսնական գործը, ըստ ինքեան, այնքան էլ հասարակ բան չէ, ինչքան թվում է: Զգացումը մոլորեցնում է, բայց խելքը աւելի է խճճում. իսկ սա՝ կեանքի մէջ ամենամեծ քայլն է: Իմ կարծիքով, ինչպէս ամէն բանում, դեռ ուրիշ ամէն բանից էլ աւելի, մարդ պատկվելու հարցով չպէտք է զբաղվի. այլ միշտ այս մշտական հարցը պէտք է դնի իր առջևը.—լաւ ապրել, համբերել ու սպասել, ժամանակը կգա, և հանգամանքներն այնպէս կդասաւորվեն, որ՝ էլ կարելի չի լինի չամուսնանալ: Այսպէս աւելի լաւ է. մարդ ոչ կսխալվի, ոչ էլ կմեղանչի:

Շատ ջանք մի՛ք գործ դնի՝ միմեանց աւելի անձնուէր լինելու վրա, այլ բոլոր ուժով աշխատեցէ՛ք զգոյշ լինել յարաբերութիւնների մէջ, որ ընդհարումներ առաջ չգան:

Որպէս զի ամուսինները բախտաւոր լինեն,—ինչպէս զրում են վէպերում և ինչպէս ցանկանում է ամէն մարդ, -պէտք է, որ նրանց միջև համաձայնութիւն լինի: Եւ որպէս զի համաձայնութիւն լինի, պէտք է, որ մարդ ու կին բոլորովին միապէս նայեն աշխարհին ու կեանքի իմաստին, (սա աւելի զաւակների վերաբերմամբ է կարևոր): Իսկ որ մարդ ու կին միապէս հասկանան կեանքը, կանգնած լինեն հասկացողութեան մի և նոյն աստիճանի վրա, — նոյնպէս դժուար կպատահի, ինչպէս այն, որ ծառի մի տերևը բոլորովին ծածկի միւսին: Բայց որովհետև այս բանը դժուար կպատահի, այդ դէպքում, համաձայնութեան, հեռևապէս և բախտի միակ հնարաւորութիւնը նրանումն է, որ երկուսից մէկը իր հասկացողութիւնը ստորադրի միւսին:

Ինձ թվում է, թէ երկու ամուսիններից նա՛, որ զգում է, թէ իր միւս կէսը իրանից բարձր է կանգնած, հասկանում է ինչ որ իրան ոչ-բոլորովին մատչելի, բայց լաւ, աստուածայի՛ն մի բան, — սա միշտ զգացվում է,—այնպէս հեշտ և ուրախութեամբ պէտք է ենթարկվի միւսին, որ մարդ զարմանում է, թէ ինչպէս է պատահում, որ այդպէս չեն անում...

Մեր կեանքի անհեթեթութիւնը առաջ է գալիս նրանի՛ց, որ կինը իշխում է մարդու վրա. իսկ կնոջ իշխանութիւնը առաջ է գալիս մարդու անժուժկալութիւնից. այնպէս որ անկարգ, անվայել կենցաղա-

վարութեան պատճառը՝ մարդու անժուժկալութիւնն է։

Հրապուրող, դրաւչութիւն ունեցող կինն ասում է ինքն իրան. «Ամուսինս խելօք է, ուսումնական, շնորհալի, հարուստ, նշանաւոր, բարոյական, սուրբ. բայց նա ինձ, լիմարիս, ստէպիս, խղճուկիս, ինչինիս անբարոյականիս... հնազանդում է. ուրեմն, խելքն էլ, ուսումն էլ—դատարկ բաներ են»։

Ա՛յս է նրանց փչացնում։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Публичная Библиотека
7/XI-1922
Именная, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳԻՆՆ Է 12 ԿՈՊ.

ՆՈՑՆ ՀԵՂԻՆԱԿԻ

1. ԱՂՕԹՔ . . . . . 5 կոպ.
2. ՍԷՐ . . . . . 8 „

Բժշկ. Պրոֆ. Բուրհերշտէյն. ԱՌՈՂՋԱՊԱՀԻԿ ԿԱՆՈՆՆԵՐ՝ բոլոր ուսումնարանների աշակերտների ու աշակերտուհիների համար . . . . . 7 կոպ.

«Ազգային գրադարան»
NL0152122